ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայք համայնք, ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Գորայք, Հեռ. (094) 015022 , gorayq.syuniq@mta.gov.am

N 291
17 հուլիս 2020թ.

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ

Ձեր 15 հուլիսի 2020 թ-ի թիվ 04//04263-2020 գրությանն ի պատասխան.

Համաձայն <<Ավտոմոբիլային ճանապարհների մասին>> ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության <<Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային եվ ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման կարգը հաստատելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1942-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> 2010 թ-ի նոյեմբերի 04-ի թիվ 1419 որոշման համապատասխան դրույթների, տեղեկացնում ենք, որ Գորայք համայնքի վարչական սահմաններում գտնվող Սյունիքի մարզի մուտքն ազդարարող հուշարձան-դարպասների հարակից տարածքների աղտոտման հանգամանքը պայմանավորված է Մ-2 միջպետական ավտոմայրուղու օտարման շերտի և հողային պաստառի մակերեսը աղբից և օտար առարկաներից մաքրելու՝ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված պարտադիր աշխատանքները ճանապարհի սպասարկումն իրականացնող կազմակերպության կողմից թերի կամ ընդհանրապես չկատարելու հանգամանքով. մասնավորապես, նշված որոշման կարգի 2-րդ կետով կառավարության սահմանել է՝ <<Ավտոմոբիլային ճանապարհների պահպանման հիմնական խնդիրն է՝ մշտապես ապահովել ավտոմոբիլային ճանապարհների՝ արհեստական կառույցների, հողային պաստառի, տրանսպորտային հանգույցների, կահավորանքի և ինժեներական շինությունների (այսուհետ՝ ավտոմոբիլային ճանապարհ) պահպանվածությունն այնպիսի վիճակում, որը համապատասխանում է անվտանգ և անխափան երթևեկության ապահովման պահանջներին>>, իսկ 28-րդ կետի համաձայն՝ <<Ավտոմոբիլային ճանապարհի պահպանման մակարդակը բնորոշող ցուցանիշների նկատմամբ առաջադրվող պահանջները գարուն-ամառ-աշուն ժամանակաշրջանի և ձմեռային ժամանակաշրջանի համար ներկայացված են ստորև բերված Աղյուսակ 3-ում, որտեղ տրված են **ավտոմոբիլային ճանապարհների պահպանման ցուցանիշներին առաջադրվող հստակ պահանջները, այդ թվում, նաև աղբահանության մասով** >> (*արձանագրված է՝ աղբ և օտար առարկաներ ճանապարհի օտարման շերտի վրա որոնք հանդիպում են հաճախ, քան (մ Թերության վերացման ժամկետը 1 օր է)*

Ելնելով վերոգրյալից, նկատի ունենալով, որ ոլորտը կարգավորող օրենքի համաձայն՝ <<Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհները (բացառությամբ Երևանի միջով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների) գտնվում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ պետական ճանապարհային մարմնի) տնօրինության և կառավարման ներքո>> և պետական կարիքների համար ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ պահպանման աշխատանքների կապալի պայմանագրերի կնքումը համայնքապետարանի իրավասություններից դուրս է, ուստի Ձեր կողմից ներկայացված խնդրի լուծումը գտնվել և գտնվում է պետական լիազոր մարմնի իրավասության տիրույթում:

Միաժամանակ, նշենք, որ անկախ վերոգրյալ իրավակարգավորումներից, համայնքապետարանի աշխատակազմը՝ իր ուժերով և կարողություններով խնդրահարույց տարածքում բազմիցս կատարել է մաքրման աշխատանքներ, սակայն նկատենք, որ հարցի միանշանակ և վերջնական լուծումը՝ օրենքի տառին համապատասխան գտնվում է պատկան մարմինների ձեռքերում:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ **ՀԱՄԻԿ ԱՐՍԵՆՅԱՆ**